մեծ քաղաքի աւերակները, որից վեց վերստ բարձր Զուխուր Յուրդ ձորի դագաթին, Կապան–Բաշի լեռան լանջին գտնւում է Զիարէթ լճակը: Այս լճակի ափերում նկատել են 25–30ի չափ վիշապային որձաքարէ գլանաձեւ արձաններ, որոնք մի ժամանակ ուղղահայեաց կանգնած են եղել լճակի ափերում, ջրերի մէջ եւ որոնք այսօր թաւալուած են գետին: Այս արձանները 5—7 մետր բարձրութիւն, 0·80—1 մետր տրամագծի թանձրութիւն ունին, տաշուած, ողորկուած եւ յղկուած են, որոնց վրայ քանդակուած են օձի, մողէսի, եղի, գոմէշի եւ ուրիշ կենդանիների պատկերներ, գլուխներ այլ եւ այլ ձեւերով: Զիարէթ բառը թւում է հնումը՝ ակկատ–սումերական տաճարներում գործածուած Զուհուրաթ բառի այլակերպումն է լինելու. ինչպէս Ճորոխի Աւազանի՝ նոյնպէս ամբողջ Նահարինի (գետերի աշխարհի) ամէն մի առուակի սկզբնական ակունքին տրւում է Ջրի Բղխման – Յայտնութեան արտայայտութեան տեղ: Զիարէթ լճակի այս արձաններից ոչ շատ հեռու, 5—6 կիլոմետր, գտնւում է Սրբահան առուակի ակունքը, իր ճահիճներով եւ վիշապական արձաններով, որը յիշեցնում է ակկատ–սումմերեան Էա–ձուկ դիւն՝ Օանէս ծովագնացին: Թէեւ քրիստոնեայ աշխարհը այս դերերը փոխադրել է Ս. Յովհաննէս Մկրտչին եւ Սրբահան անու-